

«ՅՈՒՐԱՐ ԱՂՐՑՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ», հ. 8, Աստուածաբանական հանձնաժողովի հրատարակած, 1976, 478 էջ:

Հայաստանը գեո և մշակութային սկսած սերտ կապեր էր հաստատել իր բազմաթիվ հարևանների հետ: Այդ կապերը (քաղաքական, տնտեսական, մշակութային), որոնք նպաստում էին հայերի ու հարևան ժողովուրդների փոխադարձ ճանաչմանը, տնտեսական զարգացմանը, մշակութային փոխազդեցություններին, արտացոլվել են նրանց ստեղծած գրավոր հուշարձաններում:

Հունական, լատինական, արաբական աղբյուրներից նախկինում որոշ բան թարգմանվել էր հայերեն, սակայն ասորական աղբյուրների բնագավառն այդ իմաստով միանգամայն խոսքի էր, թեև ասորիները միջնադարում և՛ տարածական, և՛ տնտեսական, և՛ մշակութային ու դավանաբանական առումով բազմաթիվ կապված էին հայերի հետ: Այսօր հրապարակվել է 2. Մելքոնյանի «Ասորական աղբյուրներ»-ի առաջին գիրքը, որ նվիրված է VI դ. ասորի պատմիչներ Մշիխա Զեխայի, Կեղծ Յոշվա Սյունակյացի, Զաքարիա Հոնտորի և Հովհան Եփեսացու երկերում Հայաստանին և հայերին վերաբերող հատվածներին հայերեն թարգմանությամբ, ինչպես նաև նրանց հեղինակների անձի ու գործի, ապրած ժամանակաշրջանի, հայ-ասորական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությանը:

Հատորը բացվում է «Ասորական գրականությունն ու պատմագրությունը» ընդհանուր տեսությամբ, որտեղ հեղինակը մերժելով այն թյուր կարծիքը, թե ասորիները կատարել են սոսկ հունական մշակույթը արևելքին ծանոթացնող միջնորդի դեր, աշխատում է ցույց տալ, որ նրանք ստեղծել են իրենց բարձրորակ գրականությունն ու արվեստը, ընդգծում այդ գործում Բարդաժանի, Եփրեմ Ասորու, Բար Հերեթուսի և այլոց թողած գրական ժառանգության նշանակությունը, անդրադառնում է ասորական վաղ միջնադարյան բանաստեղծության, վարքագրության, պատմագրության, ասորական գրականության վրա դավանաբանական վեճերի թողած ազդեցությանը և հանգամանորեն խոսում նաստորականությունը ասորիների մեջ տարածվելու պատճառներին ու ասորական մշակույթի զարգացման գործում ունեցած դերի մասին: Այստեղ հեղինակը նշում է նաև վաղ միջնադարում Պարսկաստանի և Բյուզանդիայի քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային կյանքում ասորիների խաղաղած որոշակի դերը:

Ինչպես վերը նշվեց, 2. Մելքոնյանը ներկայացրել է VI դ. ասորի լորս հեղինակների աշխատություններին՝ հիմնականում Հայաստանին ու հայերին վերաբերող հատվածների հայերեն թարգմանությամբ, ըստ այդմ էլ աշխատությունը բաժանված է լորս մասի: Յուրաքանչյուր մասի սկզբում տրվում է հեղինակի կյանքի ու գործունեության բավական հանգամանալից շարադրանքը, նշվում նրա գրական երկի նշանակությունն ու արժեքը հայոց պատմության ուսումնասիրության համար:

1. Մշիխա Զեխայի երկը կրում է Ագիարենի եկեղեցու պատմությունը խորագիրը, որտեղ հեղինակը տալիս է հիշյալ երկրի II—VI դդ. առաջին կեսը ժամանակահատվածի պատմությունը՝ զուգակցելով հարևան ժողովուրդների, այդ թվում և հայոց պատմության հետ: Իր բովանդակալից ուսումնասիրության մեջ 2. Մելքոնյանը կանգ է առնում Մշիխա Զեխայի կյանքի ու գործունեության, նրա երկի աղբյուրների, ասորական բնագրերի, Ագիարենում քրիստոնեության տարածման հարցերի վրա, ինչպես նաև բացահայտում է Ագիարենի վերաբերյալ հայկական աղբյուրների տվյալների արժեքը:

2. Կեղծ Յոշվա Սյունակյացի «Ժամանակագրությունը» բովանդակում է III դ. վերջից մինչև VI դ. սկիզբն ընկած շրջանի պատմությունը: Սա հայոց պատմության համար արժեքավոր է պարսից Կավադ արքայի (488—531 թթ.) օրոք հայերի՝ Սասանյանների դեմ բարձրացրած ապստամբության, V—VI դդ. պարսկա-բյուզանդական պատերազմների և նրանց նկատմամբ հայերի գրաված դիրքի, Հայաստանի քաղաքական վիճակի մասին պարունակած իր տեղեկություններով:

Այս բաժնի հետադոտական մասում 2. Մելքոնյանը քննում է VI դ. ասորական պատմագրության ծաղկման նախապայմանները, Կեղծ Յոշվա Սյունակյացի և նրա «Ժամանակագրու-

թիւն, վերջինիս աղբյուրների, հեղինակի աշխարհայացքի, հայկական աղբյուրների և թժամանակադրության այս կամ այն դեպքին, դեմքին և երևույթին տված մեկնաբանությունները և այլն:

3. Զաֆարիա Հոնտորի «Ժամանակագրությունը» ընդգրկում է 451—191 թթ. պատմությունը, որը նախագես գրվել է հունարեն, բայց պահպանվել է միայն նրա ասորերեն թարգմանությունը՝ ասորի մի անանուն բանաբաղի պատմական երկում, կազմելով վերջինիս III—IV և, մասամբ, V—VI բաժինները: Սա հետաքրքրական է Դվինի հայոց կաթողիկոսության, նրան ենթակա եպիսկոպոսությունների, Բյուզանդական կայսրության դեպի պարսկական Հայաստան կատարած արշավանքների մասին իր տեղեկություններով: 2. Մելքոնյանն այստեղ խոսում է նաև Զաքարիա Միտիլենացու կյանքի ու գործունեության, նրա երկի ասորերեն ընթերցման, ժամանակաշրջանի եկեղեցական հարցերի ու թժամանակագրությանն էջերում դրանց արտացոլման մասին:

4. Հովհան Եփեսացու «Եկեղեցական պատմությունը» բաղկացած է եղել երեք մասից: Առաջին երկուսը՝ Հուլիոս Կեսարից մինչև 571 թ. համարվում են կորած: Պահպանված երրորդ մասը բովանդակում է 571—585 թթ. դեպքերի պատմությունը և 571 թ. Սասանյանների դեմ հայերի բարձրացրած ապստամբության ամենակարևոր աղբյուրներից մեկն է: Հովհան Եփեսացին մանրամասն շարադրում է նաև Հուստինոս II-ի հայադավանների, ինչպես նաև՝ պարսից արքա Շապուհ II-ի հայ քրիստոնյաների դեմ կազմակերպած հալածանքների մասին: Իր ուսումնասիրության մեջ 2. Մելքոնյանը մանրամասն կանգ է առնում վերոհիշյալ խնդիրների վրա, հայկական և այլ աղբյուրների ընձեռած նյութի զուգահեռ համեմատությամբ տալիս է դրանց պատմությունը, ինչպես նաև քննում է Հովհան Եփեսացու կյանքն ու գործունեությունը, նրա պատմական երկը, վերջինիս աղբյուրները և այլն:

2. Մելքոնյանը արժեքավոր պատմաբանասիրական, աղբյուրագիտական էքսկուրսներով հայ ընթերցողին առաջին անգամ մայրենի լեզվով ներկայացրել է վաղ միջնադարի ասորական աղբյուրների կարևոր տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, հայագետներին հնարավորություն տալով ավելի խոր ուսումնասիրելու տվյալ ժամանակաշրջանի հայ-ասորական փոխհարաբերությունները, Հուսանք, որ 2. Մելքոնյանն առաջիկայում կհրատարակի միջնադարյան ասորական մյուս հեղինակների՝ Հայաստանին և հայերին վերաբերող աշխատությունների հայերեն թարգմանությունները ևս:

ՀՐԱԶ ԲԱՐՔԻԿՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու